



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

GRAD
EREN
903
BUHR

B 1,224,767



1920
1921
1922
1923
1924
1925
1926
1927
1928
1929
1930
1931
1932
1933
1934
1935
1936
1937
1938
1939
1940
1941
1942
1943
1944
1945
1946
1947
1948
1949
1950
1951
1952
1953
1954
1955
1956
1957
1958
1959
1960
1961
1962
1963
1964
1965
1966
1967
1968
1969
1970
1971
1972
1973
1974
1975
1976
1977
1978
1979
1980
1981
1982
1983
1984
1985
1986
1987
1988
1989
1990
1991
1992
1993
1994
1995
1996
1997
1998
1999
2000
2001
2002
2003
2004
2005
2006
2007
2008
2009
2010
2011
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
2023
2024
2025
2026
2027
2028
2029
2030
2031
2032
2033
2034
2035
2036
2037
2038
2039
2040
2041
2042
2043
2044
2045
2046
2047
2048
2049
2050
2051
2052
2053
2054
2055
2056
2057
2058
2059
2060
2061
2062
2063
2064
2065
2066
2067
2068
2069
2070
2071
2072
2073
2074
2075
2076
2077
2078
2079
2080
2081
2082
2083
2084
2085
2086
2087
2088
2089
2090
2091
2092
2093
2094
2095
2096
2097
2098
2099
20100

1143

20/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հ. 20/2

Գ. 6. 9/18. կ. 0. 7.

ՊԱ, ԻԿԱԶՈՎ, Է.

ԱՊՐԻԼԻ

ամսագիր, թ. 38, 96



7 կ

Հ Պ Հ Ա Հ Ա Հ Ա Հ

1906
Խ Ա Հ Լ Խ Հ Հ



№ 17

«Յառաջ»-ի գրադարան

№ 17

ԴԻԿԸՑԵՑՆ


Dickstein, S.

ՈՎ ԻՆՉՈՎ Ե

On the 1st of January, 1906

ԱՊՐՈՒՄ

ԹԱՐԳ. Ա. Տ. Գ.



ԹԻՖԼԻԶ

1906

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

6 RAD
EREN
303
R. 10

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Ելեքտրաշարժ տպարան. Հնկ. «Ներմիս» Մաղաթ. փող. № 5.
1906 (198)

ՈՎ ԻՆՉՈՎ Է ԱՊՐՈՒՄ

«Ամեն մարդ ապրում է իւր աշխատանքով»: Այդ-
պէս է արդեօք:

Առաջին հայեացքից այդպէս կթուայ իսկապէս:
Միայն աչքի անցրէք, թէ որքան է գրուել և խօսուել
այդ մասին լրագիրներում, ամսագիրներում, գրքե-
րում, մինչև իսկ եկեղեցական քարոզներում: Այս գէպ-
քում միթէ չեն կարծել շատերը, որ կօշկակարը, ու-
ղիղ որ, ապրում է իւր՝ կօշկակարի աշխատանքով,
գերձակը—գերձակի, ուսուցիչը—ուսուցչի, որ ամեն
գործարանատէր աշխատում է նոյնպէս, եթէ ոչ ձեռ-
քերով, գոնէ գլխով:

Բայց արդեօք այդպէս է իսկապէս: Արդեօք ամեն
մարդ իւր աշխատանքով է ապրում:

Երկի դուք կզարմանաք, եթէ ես ասեմ, որ ոչ
մի մարդ իւր սեպհական աշխատանքով չի ապրում,
և ոչ միայն գործարանատէրերը և վաճառականները,
այլ և բոլոր բանուոր ժողովուրդը:

Եթէ կօշկակարը, օրինակի համար, ոչ թէ միայն
կօշիկներ կարէր, այլ և ունենար մի կտոր հող, որի
վերայ ցորեն ցանէր, բանջարեղէններ տնկէր, եթէ
որ նա ինքը մանէր, գործէր և իրեն համար շորեր
կարէր, եթէ որ, մի խօսքով, այն բոլորը, ինչ որ նրան
անհրաժեշտ է, նա իրեն համար տանը պատրաստէր,

միայն այն ժամանակ մենք կարող ենք ասել, որ իսկապէս նա իր աշխատանքով է ապրում:

Եւ իսկապէս հին ժամանակները, մի քանի հարիւր տարի առաջ, երբ ամեն քաղաք բաւականաչափ սեպհական հող ունէր, իսկ ամեն արհեստաւոր, իբրև քաղաքի բնակիչ, իրաւունք ունէր այդ հողի վերայ, այն ժամանակ արհեստաւորները իրենք էին պատրաստում բոլոր անհրաժեշտ նիւթերը մի կտոր հողի վերայ և ապրում իրենց սեպհական աշխատանքով:

Բայց այժմ, ինչպէս յայտնի է, այդ այդպէս չէ: Արհեստաւորը սեպհական հող չունի, և կօշկակարը, օրինակ, միայն կօշիկ կարել գիտէ և ուրիշ ոչինչ: Իսկ կօշիկներով չես կշտանալ, նրանցով չես հագնուիլ: Նոյնը կարելի է առել և զերծակի, ատաղձագործի, քարտաշի մասին և այլն: Դերձակը չի կարող կշտանալ իւր կարած սերթիւկով, և ոչ էլ իւր տաշած քարերով:

Եթէ կայ մէկը, որը ամենից շուտ կարող է ասել, թէ իւր աշխատանքով է ապրում, դա գիւղացին է: Նա գոնէ ինքն է արտադրում իր տան հացը, կաթը, երեմն մինչև իսկ և շորերը, թէև վերջին ժամանակներս աւելի պակաս, որովհետև հագուստեղինը բազարում և աւելի գեղեցիկ է և աւելի լաւ:

Իսկ ուրիշ երկրներում մինչև իսկ գիւղացիներն էլ իրենց տանը համարեա ոչինչ չեն գործում, ինչ որ հարկաւոր է հէնց իրենց ամենօրեայ տնտեսութեան համար: Նրանցից մի քանիսը միմիայն գինի են պատրաստում, ուրիշները միայն վուշ են ցանում, երրորդները միայն բանջարեղին են տնկում և այլն. իսկ բոլոր անհրաժեշտ նիւթերը, ինչպէս ուտելեղէնի, այնպէս և հագուստի, գնում են վաճառանոցում:

Այսպէս ուրեմն, դուք տեսնում էք, որ ոչ ոք,
կամ համարեա թէ ոչ ոք իրաւոնք չունի ասելու,
որ ապրում է սեպհական աշխատանքով։ Կօշկակարն
ապրում է դերձակի, քարտաշի, ատաղձագործի և
գիւղացու աշխատանքով։ Դերձակը՝ կօշկակարի, ա-
տաղձագործի, քարտաշի և այլն։ Բոլոր մարդիկ ապ-
րում են ոչ թէ իրենց աշխատանքով, այլ օտարի, ու-
րիշ մարդոց աշխատանքով։

Բայց չէ որ նրանցից ամեն մէկը աշխատում է,
կպատասխանէք դուք, նրանցից ամեն մէկը ոչինչ չէր
ունենալ, եթէ որ չաշխատէր։

Այդ ճիշտ է. դրա համար էլ մենք չենք ասիլ,
բոլոր մարդիկ ապրում են սեպհական աշխատանքով.
այլ, որ նրանք սեպհական աշխատանքով պահում են
իրենց։

Բայց մի՞թէ նոյնը չէ, ապրել իւր աշխատանքով
և նրանով պահել իրեն։

Ոչ, միւնոյնը չէ, և ահա թէ ինչու։ Եթէ որ
կօշկակարը, դերձակը, հողագործը և բոլոր միւս մար-
դիկ իսկապէս ապրէին իրենց աշխատանքով, եթէ
որ նրանք բոլոր անհրաժեշտ պիտոյքները պատրաս-
տէին իրենց տան մէջ, ինչպէս այդ առաջ էր, այն
ժամանակ ամեն մէկը նրանցից կարող էր հաւատա-
ցած լինել, որ նրա դրութիւնը թէև միշտ միօրինակ
չի լինիլ, բայց քաղցից չի մեռնի և որևէ կերպ ծայ-
րը ծայրին կհասցնէ։ Այժմ կօշկակարը միայն կօշիկ
է կարում, նա նրանցից այնքան է պատրաստում, որ-
քան կարող է, որպէսզի յետոյ ծախէ, ինչպէս միւս
բոլոր ապրանքներն են։ Եթէ առնող կպատահէ—լաւ,
կօշիկները կվաճառէ և ձեռք բերած փողով կգնէ իրեն
բոլոր անհրաժեշտ իրերը։ Իսկ եթէ չվաճառէ։ Ի՞նչ

կլինի այն ժամանակ. Միթէ նա իւր կօշիկներով կը կերակրէ երեխաներին. Միթէ նա նրանցով կվճարէ հարկը, միթէ կվերադառնէ իւր պարտքը վաշխառուին կամ բանկիրին և այն:

Այժմ դուք տեսնում էք, որ պահել իրեն սեպհական աշխատանքով և ապրել սեպհական աշխատանքով—միևնոյնը չէ:

Երբ մարդիկ բոլոր հարկաւոր իրերը տանն էին պատրաստում, երբ նրանք քիչ էին վաճառում իրենց ապրանքներից, մինչև այն ժամանակ կարելի էր ասել, որ նրանք ապրում են իրանց աշխատանքով։ Բայց այն ժամանակից, երբ մարդիկ սկսեցին պատրաստել կօշիկներ, կողմէքներ, զգեստներ և այն վաճառելու համար, նրանք սկսեցին տանը իրենց համար քիչ աշխատել, իսկ ուրիշների համար՝ շատ։ Եւ այժմ Վարշաւայի կօշկակարը սկսեց ոռւս արհեստաւորի համար կօշիկ կարել, ոռւս ջուլհակը սկսեց դագդահի առաջ բանել Վարշաւայի կօշկակարի համար, ամերիկական գաղթականը սկսեց հաց ամբարել անգլիական բանուորների համար, անգլիական բանուորներն էլ սկսեցին երկաթէ և պողպատէ շինուածքներ մատակարարել Վարշաւայի բանուորներին։ Հետեարար, այն ժամանակից, երբ սահմանուեց արտադրութեան ծախելը, վաճառելը,—ոչ ոք չի աշխատում իրեն համար, ոչ ոք չի ապրում սեպհական աշխատանքով, այլ օտարի աշխատանքով, ուրիշ մարդոց աշխատանքով։

II

Լաւ։ Կնշանակէ, ոչ ոք չէ ապրում սեփական աշխատանքով, այլ բոլորը պահում են միայն իրենց։ այդ արգէն անկասկածելի ճշմարտութիւն պիտի լինի։

Բայց այս էլ անչափ ուղիղ չէ։ Դորան շատ բան կարելի է աւելացնել։ Բայց առժամանակ ենթադրենք, որ աւելի ճշմարտութեանը մօտիկ է այն, որ ամեն մէկը սեփական աշխատանքով է միայն պահում իրեն։ Բայց ինչու յատկապէս աշխատանքով։ Որովհետեւ, երբ որևէ մէկը ծախում է իւր ձեռագործը, թող լինի նա կօշիկներ կամ թէ զգեստներ, ամաններ թէ դանակներ, այն ժամանակ նորա ապրանքը գնահատում է աշխատանքի չափով և վճարում են նրան աշխատանքի համաձայն։ Մանրամասնորէն բացատրենք այդ։ Ենթադրենք, որ կօշկակարը ամբողջ օրը աշխատեց կօշիկների վերայ, դորա համար ստացաւ 10 արշին կտաւ։ Այս ենթադրութեան մէջ անսովոր ոչինչ չկայ։ բանեց, իսկ փոխարէնը ստացաւ կտաւ։ Բայց մի րոպէ ենթադրենք, որ աշխարհիս երեսին կայ մի այնպիսի երջանիկ երկիր, որտեղ կօշիկները երկնքից են թափւում։ Այդպիսի երկիր չկայ, բայց եթէ որ լինէր էլ, այն ժամանակ ի՞նչ էք կարծում դուք, այդուեղ արդեօք շատ կվճարէին կօշկակարին կօշիկների համար։

Ի հարկէ, ոչինչ։ Մարդիկ կասէին, որ կօշկակարին հարկաւոր չէ ոչինչ վճարել, որ նրանք աշխատանք չարժեն, և, հետևապէս, ամեն մէկը կարող է նրանցից ունենալ։ մեր կօշկակարը, որպէսզի քաղցից չմեռնի, կպարտաւորուէր ուրիշ աշխատանք սկսել, թէպէտ մեզանում կօշիկները ծառերի վերայ էլ չեն

բանում, բայց շատ այնպիսի իրեր կան, որոնց համար ոչինչ չի կարելի ստանալ, որոնք ոչինչ չարժեն այն պատճառով միայն, որ նրանց վերայ ոչ մի աշխատանք չի գործ դրուել։ Ոչ ոք ոչինչ չի վճարում ոչ աղբերի ջրին, ոչ գետի մէջի աւազին, որովհետեւ նրանց ձեռք բերելու համար հարկաւոր չէ աշխատանք գործ դնել, որովհետեւ նրանք առաջուց եին պատրաստ, նախ քան մտրդկային աշխատանքի նրանց համելլ։

Բայց զրա փոխարէն, առարկան որքան շատ է ամփոփում իր մէջ մարդկային աշխատանք, այնչափ, ինչպէս ասում են, շատ է պարունակում արժէք, այնչափ աւելի շատ կտան նրան։ Մի արշին կտաւին աւելի կտան, քան մի արշին կօլենկորին։ Ինչու։ Որովհետեւ մէկ արշին կօլենկորը աւելի շուտ և աւելի հեշտ կարելի է գործել, որովհետեւնորա վերայ հարկաւոր է քիչ աշխատանք գործ դնել, քան մի արշին կտաւի։ Ոսկէ շղթան պողպատէ շղթայից թանկ արժէ։ Ինչու։ Միթէ նրա համար, որ ոսկին աւելի լաւ է պսպղում, միթէ նրա համար, որ նա աւելի ծանր է։ Ոչ, պողպատէ շղթան կարող է նոյնչափ փայլել և կշռել որչափ և ոսկունը, բայց ոսկին դժուար է ձեռք բերւում։ Նրան գետնից հանելու համար շատ աշխատանք է հարկաւոր և, հետեւբար, ոսկէ շղթան իրեն մէջ ամփոփում է շատ աշխատանք, քան պողպատինը։

Դորա համար էլ, երբ արհեստաւորին, կօշկակարին, դերձակին կամ հացթուխին վճարում են կօշիկերի, բաճկոնի կամ հացի համար, այն ժամանակ, իսկապէս, նրանց վճարում են այն աշխատանքի համար, որն ամփոփուած է այդ կօշիկերի, այդ բաճկոնի և այդ հացի մէջ։ Եթէ բուլկի պատրաստելու համար

հարկառւում է 1 ժամ, իսկ մէկ զոյգ կօշիկ պատրաստելու համար 10 ժամ, այն ժամանակ մէկ զոյգ կօշիկի համար կարելի է ստանալ 10 բուլի, որովհետև կօշիկներում ամփոփուած աշխատանքը (կամ, ինչպէս ասում են, կօշիկների արժեքը) 10 անգամ աւելի է, քան հացում ամփոփուած աշխատանքը (կամ հացի արժեքը*):

Եթէ մէկ արշին կտորի համար վճարում են արծաթէ բուբլանոց, այդ այն պատճառաւ է, որ մահուղը պատրաստելու համար էլ (այսինքն ոչխարների պահպանութեան, բուրգը խուզելու, մահուղը ներկելու համար) կհարկաւորուի այսքան աշխատանք, որքան և մէկ արծաթէ բուբլանոց պատրաստելու համար (արծաթը որոնելու, նրան բերելու, հալելու համար և այն), օրինակ, 10 ժամ։ Մէկ արշին կօլենկորի համար վճարում ենք միայն 10 կոպ., որովհետև նրա պատրաստելու համար, (բամբակը ցանելու, դործելու, ներկելու համար) հարկաւորուեց ոչ թէ 10 ժամ, այլ միայն մի ժամ։

Ահա թէ ինչու կարելի է ասել և գրել, որ կօշկակարը, գերձակը, ատաղձագործը, փականագործը (ըլեսար), ընդհանրապէս արհեստաւորը պահում է իրեն իւր սեփական աշխատանքով։ Նոքա բոլորը պատրաստում են զանազան իրեր, այդ իրերը ինչպէս ապրանք ուղարկւում են վաճառելու—և նրանց համար վճարում են հէնց այնչափ, որչափ աշխատանք է պարունակւում նրանց մէջ։

*.) Եթէ որ ձեզ հարցնէին, ի՞նչ է բաժակի, կօշիկների, զգեստների արժեքը, այն ժամանակ դուք կարող եիք պատասխանել, որ նրանց արժեքը հաւատար է այն աշխատանքին, որն ամփոփուած է բաժակի, կօշիկների և զգեստների մէջ։

Ուրեմն և, հետեւաբար, որևէ արհեստաւոր, որչափ շատ է աշխատում, որչափ շատ աշխատանք է թափում ապրանքի վերայ, այնչափ շատ արժէք է տեղաւորում նա նորա մէջ իւր աշխատանքով, այնչափ շատ կստանայ նա վաճառելու ժամանակ, այնչափ շատ կվճարեն նրան ապրանքի համար: *)

—Ահա, տեսաք, կարող են ասել այժմ ինձ: Դուք յանձն առաք ասելու մի ինչ որ բան, որ գործարանատէրերը և վարձոզները ծածկում են մեզանից, իսկ այժմ դուք ինքներգ էլ նոյնն էք ասում, ինչ որ նըրանք, այսինքն՝ ով շատ է աշխատում, նա էլ շատ է ստանսւմ: Բայց սպասեցէք, միք շտապիլ յանդիմանելու, այլ լսեցէք ինձ: Վերևում ես ասացի, որ արհեստաւորը որչափ շատ աշխատանք է տեղաւորում առարկայի մէջ, այնչափ աւելի շատ է ստանսւմ նրա համար:

Կրկնակի պադոշով, լաւ պատրաստած կօշիկների համար կօշկակարը աւելի շատ կստանայ, քան թէ վատ պատրաստած կօշիկների համար: Այդ բոլորը ճիշտ է: Բայց որպէս զի մեր կօշկակարը կարողանայ կօշիկներ կարել, նրան հարկաւոր է կաշի, գործիքներ, արհեստանոց, իսկ այդ բոլորը փող արժեն: Փականագործը ցանկանում է փականքներ պատրաստել, նոյնպէս պարտաւոր է արհեստանոց վարձել, գնել գործիքներ, որոշ ժամանակ ապրել, մինչև որ կվաճառի իւր փականները (կողպէքները): Իսկ դրա համար կըրկին փող է հարկաւոր: Ով փող ունի, նրա համար ոչինչ. արհեստանոց կսարքէ, ապրանք կպատրաստէ, իսկ յետոյ կվաճառէ նրանց իրենց արժէքի համեմատ:

*) Տես յաւելուածը:

Բայց ինչ անէ նա, ով որ փող չունի, ով չի կարող արհեստանոց բանալ, ով չի կարող ոչ մի ապրանք արտահանել, որովհետև ոչ նիւթ ունի և ոչ գործիքներ։ Ի՞նչ անէ այն մարդը, որը—ինչպէս այդ յաճախ է պատահում—ոչ ունի և ոչ էլ օգնութիւն կարող է ստանալ որևէ մէկից։ Բայց յամենայն դէպս պէտք է ապրել, ուտել, խմել և հագնուել։

Մեր արհեստաւորը փող չունի, չի կարող ապրանք ունենալ, հետևապէս, որպէս զի ուտէ, նա պարտաւոր է իրեն ծախել, պարտաւոր է վարձուել, ստրկանալ, պարտաւոր է վարձուել աշխատելու համար։

— Ի՞նչպէս թէ «իրեն ծախել», «ստրկանալ»։ Զէ որ գործարանում աշխատելը, վարպետի մօտ աշխատելը գեռ ևս ստրկութիւն չէ։ Ինչպէս արհեստաւորը, նոյնպէս և գործարանի աշխատողը—ազատ մարդիկ են, բանում են որտեղ ցանկանում են, և որքան ցանկանում են, և ոչ ոք իրաւունք չունի հրամայելու։

Այն մարդը, որը ծախում է իւր աշխատանքը, չի կարող ազատ լինել։ Նա պէտք է որ տէր ունենայ և իսկապէս ունի։ Ազատ են միայն այն մարդիկ, որոնք կարիք չունին իրենց ծախելու։ Իսկ այժմ դժուար է այդպիսի ազատութիւն ձեռք բերել։ Բանուրը գնում է գործարան, որովհետև պարտաւոր է գնալ, որովհետև չունի սեփական նիւթ և գործիքներ, նա հպատակւում է գործարանատիրոջը, որովհետև չի կարող չը հպատակուել, որովհետև գործարանատէրն ունի հզօր օգնական—սովը, որը սպառնում է բանուրին անգործութեան դէպրում։

III

Ստրուկ է թէ ոչ ստրուկ — այդ իսկապէս միենոյն է, կառարկէք գուք ինձ։ Բանը նրանում չէ, թէ ով է ստրուկ, և ով է ազատ մարդ, այլ նրանում, թէ արդեօք ճիշտ է, որ ամեն մէկը սեփական աշխատանքով կարող է հարատութիւն ձեռք բերել։ Եւ կրկին ես ձեզ կասեմ, միք շտապիլ, դրան էլ կհասնեմ։ Ճէ որ պէտք է այնպէս ֆննել, որպէս հարկաւոր է։

Ամեն մի բանւոր, նա փականագործ լինի թէ ատաղձագործ, գերձակ թէ կօշկակար, եթէ նա ոչ փող ունի, ոչ գործիքներ, ոչ տան մէջ բանելու արհեստանոց՝ գնումէ իրեն ծախելու։ Վաղ թէ ուշ, վերջապէս նա գտնում է գործարանատէր կամ մի վարպետ, որ գնում է նրան։

Ինչո՞ւ է նա նրան գնում։ Միթէ նրա համար, որ նա նրան խղճաց և ցանկանում է օգնել, որովհետեւ անյաջողութեան մէջ է։ Ոչ, նա նրան գնում է, գիտենալով, որ բանուորը գիտէ և կարող է մեքենայ կառավարել, մուրճով ծեծել, պարօշներ կացնել։ Մի խօսքով նրա համար, որ նա կարող է աշխատել։ Գնելով նրան, վարպետը կամ գործարանատէրը մտածում է միմիայն բանւորի ոյժի և հմտութեան մասին։ Եթէ նա այդ ոյժը չունենար, գործարանատէրը նրան ձրի էլ չէր վերցնիլ։ Նրան հարկաւոր է միայն աշխատող ոյժ։ Նրա համար ամբողջ հարցը նրանումն է, թէ որքան վճարէ այդ ոյժի համար, դրանումն է բոլոր խնդիրը։ Դժուար չէ հասկանալ, թէ որքան է հարկաւոր վճարել բաժակի, զամբիւղի, մի զոյգ կօշիկի համար և այն։ Այդ որոշում է աշխատելու

ժամերի քանակով, որը գործ է դրւում այդ իրերը շինելու ժամանակ։ Եեթաղրենք, որ բաժակ պատրաստելու համար գործադրուած է կէս ժամի աշխատանք, մի զոյտ կօշիկի համար—10 ժամի, ափսէ պատրաստելու համար—1 ժամի։ Ենթաղրենք, որ մեզ մօտ 1 ժամի աշխատանքը գնահատում են 10 կոպ., (որովհետև արծաթէ 10 կոպէկանոցը պատրաստելու համար էլ 1 ժամի աշխատանք է հարկաւոր)։ Այժմ դժուար չէ գտնել, թէ ինչ արժէ բաժակը։ Եթէ նրա վերայ գնացել է կէս ժամի աշխատանք, այն ժամանակ, կնշանակէ, նա արժէ 5 կոպ.։ Եթէ կօշիկների վերայ գնացել է 20 ժամ, այն ժամանակ նրանք արժեն 20 տասը կոպէկանոց կամ 2 րուբլ։ Եթէ ափսէի վերայ գործադրուած է 1 ժամի, այն ժամանակ նա արժէ 10 կոպ.։

Բայց ի՞նչպէս որոշել, ո՞րքան արժէ մարդը, որքան վճարել նրա ոյժի համար։

Ենթաղրենք, որ բանւորը, այսինքն նրա աշխատող ոյժը, գնւում է 1 օրուայ համար. որ այդ բանւորը, որպէսզի ապրի և բանէ, որպէսզի պահպանէ իւր աշխատող ոյժը, պիտի ամենայն օր 60 կոպ. ստանար, որը և ծախսում է (ուտելու, բնակարանի, զգեստների համար և այլն), որպէսզի կազդուրէ իւր ոյժերը. այդ դէպքում մենք կարող ենք ասել, որ աշխատող ոյժը արժէ 60 կոպ. կամ 6 ժամուայ աշխատանք (եթէ 10 կոպէկանոցը ունի նոյն արժողութիւնը, ինչ որ մէկ ժամույ աշխատանքը *):

Գործարանատէրը շատ լաւ գետէ, որ բանող ոյ-

*) Պիտի յիշել, որ աշխատող ոյժի արժէքը հաւասար է այնչափ ժամուայ աշխատանքի, որչափ հարկաւորում է աշխատաւորի կեանքը պահպանելու համար։

Ժը արժէ 6 ժամուայ աշխատանք, այսինքն այնչափ, որչափ արժէ 6 ափսէն կամ 12 բաժակը և դորա համար էլ բանուորին վճարում է նրա ոյժի համար, որպէս մի ապրանքի համար, որ արժէ 60 կոպ.: Այդպէս ուրեմն բանուորը իւր աշխատող ոյժի համար միշտ այնչափ է ստանում, որչափ նրան անհրաժեշտօրէն հարկաւոր է իւր խղճուկ ապրուստի համար:

Այժմ մի անգամ էլ վերագառնանք մեր հարցին. ինչո՞ւ է գործարանատէրը աշխատող ոյժ գնում. ինչո՞ւ բանուորը նրա վերայ ծախում այդ.—գա հասկանալի է. սովո՞ւ է ստիպում այդ բանն անելու, որ աւելի ուժեղ է, քան ամեն մի մարդու ազատութեանը նածին զգացմունքը, աւելի ուժեղ՝ քան ամօթը:

Հապա ինչո՞ւ է, ուրեմն, գործարանատէրը աշխատող ոյժը գնում: Զուարձութեան համար: Ո՞չ, հապա ինչո՞ւ համար: Նորա համար, որպէսզի շահ ստանայ:

Մեզ համար օրինակով պարզենք այդ: Ենթադրենք, որ որևէ մէկը բաց արեց բամբակի գործարան, ենթադրենք, որ 1400 լ. բամբակ է առնուած, 80 րուբ. մեքենաներ, գազի և այլ բաների համար ծախսուած է 24 րուբ., և որ գործարանը արդէն գործում է: Ի՞նչ էք կարծում դուք, գործարանատէրը ինչո՞ւ բացեց գործարանը: Պարզ է, նրա համար, որ ցանկանում է մանածը աւելի թանկ ծախել, քան թէ վճարել է բամբակին, մեքենաներին և այլն: Պարզ բան է, որ երբ բամբակից մանած կստանայ, այն ժամանակ չի ծախիլ նրան 1504 րուբ., այլ կցանկայ ստանալ, ենթադրենք, 2000 լ. *). բայց բաւական չէ

*) 1504 րուբ. նորա ընդհանուր ծախսն է, այդ օրինակում 1400 լ. արժէ բամբակը, 80 լ. մեքենաները, 24 լ. գազը և այլն. ընդհամենը 1504 լ.:

միայն ցանկալ, հարկաւոր է իսկապէս 2000 ր. ըստանալ. բայց նա արդեօք կստանամյ այդ—դեռ ևս հարց է: Եթէ այնպիսի հրաշք պատահէր, որ մեքենաները առանց բանւորների օդնութեան բամբակ մանէին, և եթէ որ մեր գործարանատէրը իւր մանածը բերէր և ցանկանար 2000 րուբ. ստանալ, այն ժամանակ վաճառականը պարզապէս այսպէս կպատասխանէր. քո մանածում կայ, առաջինը, բամբակի արժէք, այսինքն 1400 ր., այնուհետև մեքենաների արժէք կամ 80 րուբ. և, վերջապէս, ածուխի, գազի արժէք և այլն կամ 24 ր., բոլորի արժէքը միասին 1504 ր., ոչ աւելի և ոչ պակաս, և դրանից մի կոպէկ աւելի չեմ տալ:

Զգիտենք, արդեօք գործարանատիրողը դիւր կը գամը այդպիսի պատասխանը:

Գիտենք միայն, որ մեքենաները մինչև այժմս էլ իրենք իրենց չեն կարողանում աշխատել, և որ գործարանատէրերի բաղդից, մեքենաների վերայ պիտի մարդիկ աշխատեն: Հասկանալով այդ, գործարանատէրը վարձում է, ենթաղրենք, 100 բանւոր և վճարում է նրանց աշխատանքի համար, որպէս ապրանք, օրական 60 կոպ.:

Օրական 60 կոպէկով վարձուած բանւորը, բամբակը մաքրում է, կարծ (վիլայի վերայ փաթաթած, ոչ կծկած՝ թել) է շինում և այլն, մի խօսքով, աշխատում է, բամբակի մէջ դնում է իւր աշխատանքը:

Մէկ ժամից յետոյ, նա միայն մի ժամի աշխատանք է գործ դնում կամ բամբակի գինը աւելացնում է 10 կոպէկով (եթէ մի ժամուայ աշխատանքը 10 կոպ. արժէ.), 2 ժամից յետոյ, գործադրելով իւր աշխատանքի մի մասը, նա նրա գինը բարձրացնում է 20

կոպէկով, 3 ժամից յետոյ նա նրաց գինը աւելացնում
է 3 ժամուայ աշխատանքով կամ ամբողջ արժէքը
բարձրացնում է 30 կոպ. և այն, վերջապէս, 6 ժամ
աշխատելուց յետոյ արժողութիւնը կաւելանայ 60
կոպէկով, ճիշտ այնչափ, որչափ գործարանատէրը
վճարում է նրա աշխատող ոյժի համար։ Այդպէս,
ուրեմն, բանւորը 6 ժամ աշխատելուց յետոյ ամբող-
ջովին վերադարձնում է իրան վճարուածը։ Նա այդ-
պէս բանում է ամբողջ մէկ շաբաթ, որի վերջանա-
լուց յետոյ, գործարանատէրը հաւաքում է մանածը
և տանում է նրան շուկայ, ցանկանալով նորից 2000
լ. ստանալ։

—Ո՞րքան ես ցանկանում մանածի համար։—
2000 րուբլի, պատասխանում է վաճառականը։—
Դա չափազանց շատ է։ Միթէ գու կարծում ես,
որ քո մանածում իսկապէս պարունակում է 2000
րուբլու արժողութիւն։ Ուր է այդտեղ։ Հաշուենք
միասին։ Մանածի մէջ պարունակում է 1400
րուբ. արժողութեան բամբակ, 80 րուբ. արժողութեան
մեքենաների, 24 լ. արժողութեան գազ և ածուխ։ և
360. լ. արժողութեան բանւորական ոյժ (եթէ շաբա-
թուայ ընթացքում 100 բանւորը բանում էին 6 օր,
օրական 6 ժամ, ժամը 10 կոպ, վճարով. $6 \times 6 \times 100 \times 10 = 360$ լ.) կամ մանածի մէջ բոլորը միասին պարունակ-
ւում է 1864 րուբլու արժողութիւն։ Հետևաբար, կարող
եմ քեզ միայն 1864 ր. տալ. և ոչ մի կոպէկ աւել չեմ
կարող տալ։ Այդ ի՞նչպէս է. կնշանակէ ես ոչ մի օ-
գուտ չունեցած։ Ո՞րտեղ է իմ օգուտը։ Եւ ինչու
համար գործարան բաց արի. —նա ի՞նչ բերեց ինձ
համար։

Իսկապէս, օգուտ չէր ունենալ, եթէ որ մեր

գործարանատէրը գլխի չը նկնէր իւր բանւորներին, իրենց վարձի համաձայն 6 ժամ աշխատող, թողնելու գործարանում աւելի երկար ժամանակ աշխատելու, քան հարկաւոր է:

— Այդ ի՞նչ բան է—բանւորները կարող էին առել գործարանատիրոջը—դու ստիպում ես մեզ աւելի աշխատել, չէ՞ որ մեզանից ամեն մէկը աշխատել է արգէն իրեն վճարուած վարձի փոխարէն:

Զէ՞ որ մենք բամբակի վերայ աւելացրել ենք այնչափ արժէք, որչափ արժէ մեր աշխատող ոյժը: Ես ձեր աշխատող ոյժը գնել եմ ամբողջ օրուայ համար, և ոչ թէ 6 ժամուայ, և ձեր աշխատանքից կարող եմ օգտուել ամբողջ օրուայ ընթացքում:

Եւ բանւորները, որոնք 6 ժամուայ աշխատանքից յետոյ պիտի թողնէին գործարանը, գնային հանգստանային կամ իրենց համար աշխատէին, շարունակում են մնալ և աշխատում են 6 ժամ ևս:

Գործարանատէրը նրանց նոր նիւթ է տալիս, և գործը գլուխ է գալիս: Բանւորներն իրենց աշխատանքի ամեն մի ժամից յետոյ այդ նոր բամբակի վերայ աւելացնում են նոր արժէք, և նրանցից ամեն մէկը 6 ժամ աշխատելուց յետոյ կաւելացնէ 6 ժամուայ արժէք:

Հասկանալի է, որ այդ նոր արժէքը արգէն ոչինչ չարժէ գործարանատիրոջ համար—նա միանգամայն ձրի է: Մէկ բանւորը աշխատելով 6 ժամ, այդպիսով աւելացնումէ 6×10 (եթէ մէկ ժամուայ աշխատանքը արժէ 10 կ.) կամ 60 կ. արժէք: 100 բանւորը մէկ օրում կաւելացնեն հարիւր անգամ շատ կամ 60 ըուբլի, իսկ մէկ շաբաթում, աշ-

խատելով 6 օր, նրանք կաւելացնեն կրկին 6 անգամ
աւելի կամ 360 ըուբ. նոր արժէք:

Եթէ այժմ մեր գործարանատէրը ցանկանայ իւր
մանածի այս մասը ծախել, *) այն ժամանակ նա հր-
քան կստանայ նրա համար: Պարզ բան է, որ կրկին
1864 ըուբլի, որովհետև մանածում կպարունակուի
նոր բամբակի 1400 ըուբլու արժէքը, նոր մեքենաների
80 ըուբ. արժէքը, 24 ըուբլու ածուխի և գաղի
արժէքը. և, վերջապէս, 3600 ժամուայ աշխատան-
քի արժէքը, որը ձրի է ստացել նա բանւորներից:

Այժմ արդէն գործարանատէրը իւր մանածը ու-
րախութեամբ կզիջի այդ գնով, որովհետև նա նրան
նստել է ոչ թէ 1864 ր., այլ միայն 1504 ր. (1400
ըուբլու բամբակ, 80 ըուբ. մեքենաներ, 24 ըուբ.
գաղ և ածուխ. $1400+80+24=1504$ ր.):

Այժմ, պարզ է, որ արդիւնաբերութիւնը օգուտ
բերեց: Այժմ արդէն վերջնական հաշիւ անենք: Մեր
գործարանատէրը բամբակի համար տուեց 2 անգամ
1400—ական, ըուբլի. այսինքն՝ 2800 ր. 2 անգամ 80
—ական, 2 անգամ 24—ական ըուբ. ածուխին և դա-
զին, այսինքն 48 ր. և բանւորներին վճարեց 360 ր.
կամ բոլորին միասին տուեց ընդամենը 3368 ր.
($2800+160+48+360=3368$): Առաջին բաժին մա-
նածի համար նա կստանայ 1864 ր. միւսի համար
նոյնպէս 1864 ր. կամ բոլոր մանածի համար 3728 ր.
($1864+1864=3728$), կնշանակի, օգուտ ունեցաւ նա
360 ր. ($3728-3368=360$):

Ո՞րտեղից առաջացաւ այդ օգուտը. պարզ է, որ
նա երեան եկաւ նրա համար, որ գործարանատէրը

*) Այսինքն, աւելորդ ժամերում աշխատած մասը:

ոչինչ չվճարեց բանւորներին օրուայ միւս կիսի համար, նրա համար, որ բանւորներն իրենց աշխատանքի երկրորդ կէսը ձրի տուին նրան. նրա համար, որ բացի 3600 ժամուայ վարձադրած աշխատանքից, բանւորները բամբակի վերայ աւելացրին 3600 ժամուայ չվարձատրած, աւելորդ աշխատանք, կամ, ինչպէս ասում են, 3600 ժամուայ յաւելեալ աշխատանքը *):

Այժմ մենք գիտենք, թէ գործարանատէրը ինչու է վարձում բանւորներին: Նրա համար, որպէսզի նըրանց աշխատանքից օգուտ ստանայ, որպէսզի նրանցից յաւելեալ աշխատանք ստանայ: Գործարանատէրը, կնշանակէ, իւր արդիւնքը ստանում է բանւորների աշխատանքից:

Բանւորներն իրենց համար միայն կէս օր են աշխատում, իսկ օրուայ միւս կիսի ընթացքում աշխատում են գործարանատիրոջ համար: Բանւորները իրենց կեանքի կիսի ընթացքում աշխատում են իրենց համար, իրենց ընտանիքի, իւրայինների համար իսկ կեանքի միւս կէսը գնում են այն բանի համար, որպէսզի գործարանատէրը իւր բամբակից արգիւնք ստանայ, որպէսզի նա յաւելեալ աշխատանք կարողանայ ստանալ:

Այս, ինչ որ մենք ասացինք բամբակի գործարանատիրոջ համար, նոյնը կարելի է ասել աշխարհի բոլոր վարպետների և գործարանատէրերի համար: Նը-

*) Ուրեմն ի՞նչ բան է յաւելեալ աշխատանքը: Այդ այն արժէքն է, որը բանւորներն աւելացնում են պատրաստուող ապրանքի վերայ, արդէն նրանից յետոյ, երբոր նըրանք վերջացրել են իրենց վարձատրած աշխատանքը:

բանք բելորը դնում են բանւորներին, բոլորը գնում են նրանց աշխատող ոյժը միայն նրա համար, որպէսզի նրանց աշխատանքից օգտուեն, որպէսզի նրանց ստիպեն աւելի շատ աշխատելու, քան հարկաւոր է:

IV

Դուք, ի հարկէ, կհամաձայնուեք նրա հետ, ինչ որ ես ձեզ պատմեցի այժմ։ Միայն մի բան կարող էք առարկել դուք, որ բամբակի գործարանի օրինակը այնչափ էլ ճշմարտանման չէ։ Ո՞րտեղ և ինչ ժամանակ է լսուած, որ մեքենաները արժենալիս լինեն միայն 80 ր., կամ բամբակը միայն 1400 ր.։ Շատ ճիշտ է։ Այս օրինակի մէջ բերուած թւերը ընտրւած են միայն նրա համար, որպէսզի հեշտ լինի բացատրել, թէ ինչ բան է յաւելեալ արժէքը։ Այժմ ես ձեզ համար օրինակ կբերեմ կեանքից, և թուերը այնպէս ճիշտ կլինեն որ ոչ ոք ոչինչ չի կարող առարկել։

Անգլիայում, որպէս ամեն մէկին յայտնի է, մեծ քանակութեամբ բամբակ է պատրաստում *):

Այստեղ վաղուց արդէն գոյութիւն ունեն շոգիաւոր գործարաններ, — շատ վաղուց է, որ բանւորները դադարել են իրենց համար աշխատելուց, այլ պարտաւորուած են իրենց աշխատանքը ծախելու, դառնալով սովորական վարձկան։ արդէն վաղուց է, որ նրանք համբերում են թէ կարիքին և թէ սովին։

*) Անգլիայում 1837 թ. պատրաստուած է 1264 միլոնի գրուանքայ բամբակ $33\frac{1}{2}$ միլ. իլիկի օգնութեամբ։

Այնինչ հարստանում են գործարանատէրերը։ Այդպէս ուրեմն, ենթադրենք, որ այդպիսի մի բամբակի գործարանատիրոջ գործարան պահելը և ամբողջ արդիւնաբերութիւնը տարեկան արժեցաւ 134, 250 ր., իսկ տարուայ ընթացքում նա իրեն մանածը վաճառեց և նրա փոխարէն ստացաւ 159,000 ր։ Կնշանակի, օգուտ ստացաւ նա 24, 750 ր. (159,000—134, 250 =24,750) կամ 18₀/₀, Դուք գիտէք, ի հարկէ, որ դա դեռևս այնքան էլ մեծ օգուտ չէ, որորհետեւ մեզ մօտ էլ գործարաններ կան, օրինակ, ճակնդեղաշաքարի գործարաններ, որոնք 40—50 և աւելի տոկոս օգուտ են տալիս։ Տեսնենք, թէ մեր գործարանատէրը որտեղից է ստանում այդ օգուտը։ Աւելի լաւ պարզաբանելու համար հաշուենք թէ արտադրութեան համար շաբաթական որչափ է ծախսւում։

Նրա գործարանում կայ 10,000 իլիկ, շոգիի օգնութեամբ պտտուող։ Մէկ իլիկը (ի հարկէ բանւորի օգնութեամբ) շաբաթական կարող է տալ 1 գրուանքայ մանած։ 10,000 իլիկ է. — հետեւապէս, գործարանում շաբաթական պատրաստում է 10,000 գր. մանած։ Բայց որպէսզի. 10,000 գրուանքայ մանած ստացուի, հարկաւոր է 10,000 գր. բամբակից աւել գնել, որովհետեւ աշխատելու ժամանակ նրա մի մասը որպէս անպէտքութիւն ոչնչանում է։ Մեր գործարաններում հարկաւորում է 10,6000 գր. բամբակ գնել, որովհետեւ պատրաստելու ժամանակ 600 գրուանքան ոչնչանում է։ Անգլիայում 1871 թ. բամբակի գըրուանքան արժէր 19₁/₂ կոպ., իսկ, հետեւապէս, 10, 600 գր. բամբակի համար հարկաւոր է ծախսել 10, 600 անգամ շատ, այսինքն 2067 ըուբլի։

Որպէսզի այս բամբակից մանած ստացուի, կար-

Առ են մեքենաներ, դանագան օժանդակիչ նիւթեր և բանւորական աշխատանք։ Մեքենաները, այսինքն իլիկսերը շոգեմեքենայի հետ միասին արժեն 60,000 ր.։ Բայց միանգամ առնուած մեքենաները միանգամից չեն մաշւում, այլ կարող են 10 տարի ծառայել, այդ պատճառով մեքենաների վերայ գնացած ամեն տարուայ ծախստ 60,000 րուբ. չի լինել, այլ 10 անգամ քիչ, այսինքն 6000., իսկ ամեն շաբաթուայ ծախսը (եթէ տարուայ մէջ կայ 50 աշխատանքի շարաթ) 50 անգամ քիչ, այսինքն 120 ր.։ Այնուհետև, մեքենաների համար անհրաժեշտ է քարածուխ. (կաթսաները տաքացնելի համար), ձէթ (անիւներին քսելու համար), գազ (գործարանը լուսաւորելու համար) և այլն։ Մեր գործարանում ածուխի համար ամեն շաբաթ ծախսում է 24 ր. 60 կ., գազի համար—6 ր., գործարանատէրը բնակարանի համար շաբաթական վըճարում է 36 ր.,։ Շաբաթուայ ամբողջ ծախսը բամբակի, մեքենաների, ածուխի, գազի, ձէթի, բնակարանի և այլն հաւասար կլինի 2284 ր. 50 կ.։ Բայց և այնպէս, բոլոր այս նիւթերը ոչինչ չեն տալիս, եթէ նրա հետ չեն միացնում բանւորական ձեռք։ Դորա համար գործարանատէրը վարձում է 135 բանւոր. (նըրանցից ամեն մէկը հսկում է 74 իլիկի վերայ) և վճարում նրանց աշխատող ոյժի համար այնչափ, որչափ հարկաւոր է նրա (ոյժի) արտադրութեան համար. կամ բանւորի ապրուստի համար (կերակրի, գգեստների), ենթադրենք, շաբաթական ամեն մէկին 2 ր. 25 կ.։ Բոլոր բանւորներին շաբաթական կտան 303 ր. 75 կ.։ Եթէ որ բանւորներն աշխատէին միայն իրենց համար, եթէ որ նրանք գործարանատիրոջը տային այնչափ աշխատանք, որչափ որ իրենք են վերցրել գործարա-

նատիրոջից որպէս աշխատանքի վարձ, այն ժամանակ
հեշտ կլինէր հաշուել, թէ որքան կլինէին արժենալիս
նրանց ձեռքով պատրաստուած 10,000 դր. մանածը:
Եւ, իսկապէս, այդ մանածում պիտի պարունակուէր.
1) բամբակի արժէք—2067 ր. 2) մեքենաների ար-
ժէք—120 ր., 3) ածուխի արժէք—24 ր. 60 կ., 4)
ձէթի արժէք—24 ր. 60 կ., 5). գազի արժէք—6 ր.
6) բնակարանի արժէք—36 ր., 7) բանւորների վարձ
—303 ր. 75 կ.: Բոլորը միասին 2587 ր. 50 կ. իսկ
մէկ գրունքան 10,000 անգամ քիչ կամ իօտաւորա-
պէս 26 կ.:

Այն ինչ, մեր գործարանատէրը մէկ գրուանքայ
մանածի համար ստանում է ոչ թէ 26 կ. այլ $31\frac{5}{8}$
կոպ., իսկ 10,000 գրուանքայ մանածի համար 3162
ր. 50 կ., այսինքն 575 րուբլով աւելի (3162 ր.
 50 — 2587 ր. 50 կ.= 575 ր.), քան թէ մենք հաշուե-
ցինք:

Եթէ մեր գործարանատէրը 575 ր. աւել ստա-
ցաւ, այդ, ի հարկէ, նրա համար, որ նրա մէջ պա-
րունակում է նոր արժողութիւն, որը առաջ չկար,
որը բանւորներն աւելացրին իրենց սեփական չվար-
ձաւրած աշխատանքով։ Մենք տեսնում ենք, հետևա-
բար, որ 575 ր. օգուտը առաջ եկաւ չվարձատրած
աշխատանքից։ Այդ բանւորները մի շաբաթուայ աշ-
խատանքի համար ստացան գործարանատիրոջից 303
ր. 75 կ., իսկ շաբաթուայ ընթացքում աշխատեցին
ոչ թէ միայն իրենց վճարուածի փոխարէն, այլ և
բամբակի վերայ աւելացրին 575 ր. չվճարուած աշ-
խատանք։ Նրանցից ամեն մէկը օրական ստանում է
 $37\frac{1}{2}$ կ., և ոչ թէ միայն վերադարձնում է այդ իւր

աշխատանքով բամբակի արժեքն աւելացնելով, այլ և աւելացնում կրկին նոր արժեք (յաւելեալ արժեք) $58\frac{1}{2}$ կ.: Հետևաբար, չվարձատրուած աշխատանքը $1\frac{1}{2}$ անգամ աւելի է երկարում, քան վարձատրուածը: Բանւորը $1\frac{1}{2}$ անգամ աւելի է աշխատում գործարանատիրոջ համար, քան թէ իրեն համար:

Յաւելեալ աշխատանքը մէկ ու կէս անդամ շատ է, քան վարձատրուած աշխատանքը, կամ, ինչպէս ասում են, յաւելեալ աշխատանքի չափն է $1\frac{1}{2}$ (կամ $150\text{ }0/0^*$):

Այժմ, կարծեմ, մեզ համար պարզէ, որ ամեն օգուտ էլ սեփական աշխատանքից չի ստացւում. մենք, գոնէ, տեսանք, որ գործարանատէրը իւր օգուտը ստանում է ոչ թէ իւր սեփական աշխատանքից, այլ օտարի:

Իսկ վարպետները, կալուածատէրերը, աստիճանաւորները, վաճառականները և այլն, ի՞նչ կարելի է ասել նրանց օգուտի մասին: Ակսենք վարպետից:

Դուք, ի հարկէ, գիտէք, որ մեզ մօտ կօշիկների մեծ մասը մասնաւոր արհեստանոցներումն են պատրաստում, որտեղ վարպետը հսկում է աշխատանքի վերայ. օգնականները աշխատում են վարձով, աշ-

*) Յաւելեալ աշխատանքի չափը, հետևապէս, չվճարած աշխատանքի և վճարած աշխատանքի միջև եղած յարաբերութիւնն է: Այդպէս ուրեմն, եթէ բանւորը իրեն համար աշխատում է 4 ժամ, իսկ դրամատիրոջ համար 8 ժամ, ապա ուրեմն չվճարած աշխատանքը \times անգամ շատ է վճարածից և յաւելեալ աշխատանքի չափը = 2 կամ $200\text{ }0/0$: Եթէնա 6 ժամ իրեն համար է աշխատում և 6 ժամ դրամատիրոջ համար՝ ապա ուրեմն յաւելեալ աշխատանքը հաւասար է 1 կամ $100\text{ }0/0$:

կերտները՝ ձրի։ Որ վարպետը շահում է աշակերտի աշխատանքից և նրանից օգուտ է ստանում, գրա մասին գիտեն մինչև իսկ փոքրիկ երեխաները։ Այստեղ մենք խօսում ենք օգնականներին վճարուած աշխատանքի մասին։ — Դուք գիտէք, թէ որչափ ծանր է կօշկակարի դործը։ Իւր աթոռի վերայ կռացած, մութու տօթ սենեակում, նա պարտաւոր է 15—16 ժամ աշխատել, որպէսզի վաստակէ միայն իրեն պահպանելու համար։ վճարում են նրան հատով, մի զոյգ կիսակօշիկների (ատիճետե) համար 90 կ.։ Նպաստաւոր հանգամանքներում, լաւ օգնականները 15 ժ. ընթացքում կարող են կարել 2 զոյգ կիսակօշիկներ և իւր բանած աշխատանքի համար ստանալ 1 ր. 80 կ.։ Այժմ տեսնենք, թէ որտեղից է առաջանում վարպետի օգուտը։

Կաշին, ուետինը, պաղօջները մի զոյգ կիսակօշիկների համար արժեն 2 ր. 10 կոպէկից մինչև 2 ր 55 կ., մնացած նիւթերը (մոմած թել, բիզ մեխեր և այլն.) 10 կ., բնակարան, ենթագրենք, 10 կոպ. *), օգնականի աշխատանք—90 կոպ.։ Եթէ որ մեր օգնականը աշխատանքի համար ստանար այն բոլորը, ինչ որ իրեն հարկաւոր է, այն ժամանակ մի զոյգ կիսակօշիկում պիտի պարունակուէր նիւթի արժէքը (կաշի, ուետին, պաղօշ) 2 ր. 55 կ., բնակարանի արժէք 10 կ., օգնականի աշխատանքի վարձ 90 կ., այնպէս որ կի-

*) Հասկանալի է, որ բնակարանը աւելի թանկ արժէ, գուցէ և 9 բուր., գուցէ և 15 ր. և աւելի, բայց այդ բնակարանում պատրաստում են ոչ թէ մէկ զոյգ կօշիկ, այլ մի ամսում 50—100 և աւելի, դորա համար էլ ամեն մի զոյգին բնակարանի համար գալիս է անհամեմատ աւելի քիչ ենթադրենք 10 կոպ.։

սակօշիկները պիտի արժենային 3 բուք. 65 կ., այնինչ վարպետը մի զոյգ կիսակօշիկը վաճառում է 5 ր., այսինքն 1 ր. 35 կոպէկով թանկ:

Ո՞րտեղից առաջացաւ այս 1 ր. 35 կ.: Պարզ է, որ նա չկար ոչ պաղօջներում, ոչ մեխերում, ոչ բնակարանում, այս նոր արժէքը կարող էին ստեղծել միայն բանւորները:

Այդպէս ուրեմն, մեր օգնականը 90 կոպէկով, բացի վճարած աշխատանքից, վարպետի համար աւելացրեց 1 ր. 25 կոպէկի չվճարուած աշխատանք, այսինքն, յաւելեալ արժէք, որով և օգտուում, է հասկանալի է, միայն վարպետը: Կրկին, կնշանակէ, ըստ վճարուած աշխատանքը մէկ ու կէս անգամ շատ է վճարածից, յաւելեալ արժէքի չափը կրկին $1\frac{1}{2}$ կամ 150% է: Բանւորը 15 ժամուայ ամենօրեայ նեղութիւնից յետոյ, իրեն համար միայն 5 ժամ է գործում, իսկ 10 ժամ տալիս է վարպետին, հարստացնելով նրան:

Այժմ դուք տեսնում էք, թէ վարպետը ո՞րպէս է ստանում իւր օգուտը: Արդեօք սեփական աշխատանքնիվ: Պարզ է որ, ոչ: Հէնց այնպէս, որպէս և գործարանատէրը, նա հարստանալ կարող է միայն օտարի աշխատանքով, միայն իւր բանւորների և արհեստաւորների աշխատանքով:

V

Իսկ վաճառականները, կալուածատէրե՞րը, աստիճանաւորնե՞րը և այլն:

Դրանց էլ կհասնենք այժմ: Եւ որպէսզի մեզ համար պարզենք, թէ որտեղից է առաջանում դը-

րանց օգուտը, որպիսի աշխատանքով են դրանք ի-
րենց պահում, օրինակ վերցնենք:

Ենթագրենք, որ մի որևէ է գործարանատէր իւր
ձեռնարկութեան համար զբեց 150,000 րուբլի. թէ այդ
ինչպիսի ձեռնարկութիւն է, մեղ համար միւնոյն է,
թէկուզ հէնց ճակնդեղաշաքարի գործարան։ Մեր գոր-
ծարանատէրը գնեց մեքենաներ, ճակնդեղ, այլ հար-
կաւոր նիւթեր, բանտորներ վարձեց և, տարուայ վեր-
ջը, շաքարի համար ստացաւ 195,000 րուբ.։ Այդպի-
սով իւր 150,000 ր. գրամագլխից օգուտ է ստա-
նում 45,000 ր.։ Մենք արդէն գիտենք, որ այս
45,000 րուբլին բանտորներին չվճարուած աշխա-
տանքն է կամ յաւելեալ արժէքը։ Գործարանատէրը
այս բոլոր օգուտը մեծ ուրախութեամբ կը վերցնէր,
թէպէտ և գրա վերայ ոչ մի աշխատանք չի թափել,
բայց փողերից բաժանուելը այնքան էլ հեշտ բան չէ։

Բայց «յաւելեալ արժէքն» ստանալու ուրիշ շատ
սիրահարներ էլ կան։ Ամեն մէկը կցանկանար մի փոքր
էլ գոնէ իւր գրպանը ձգել։ Ամենից առաջ իւր ձեռ-
քը մեկնում է վաճառականը. գործարանատէրը ա-
ռանց վաճառականի ոչինչ չի կարող անել, որովհետեւ
նա գիտէ, որ իւր ապրանքից ոչ մի օգուտ չի ըս-
տանալ, քանի որ այդ ապրանքը ընկած է նրա մթե-
րանոցում. սկզբում հարկաւոր է ապրանքը վաճա-
ռել, փողի հետ փոխել. և միայն այն ժամանակ կա-
րելի է ասել, որ գործ է արուած։ Կնշանակէ, հար-
կաւոր է վաճառական գտնել, որպէսզի ապրանքը
նրա վերայ ծախէ։

Յայտնուում է վաճառականը, նա պատրաստ է
ապրանքը գնել, բայց միայն այն պայմանով, եթէ
վաճառողը մի քանի տոկոս զիջում կանէ նրան։

Գործարանատէրը սրան չի կարող չհամոձայնուել, զիջում է նրան, ենթադրենք, բուբուց 10 կոպ. և վաճառում է նրան իւր շաքարը ոչ թէ 195,000 ր., այլ 187,500 ր.: Գործարանատիրոջ օգուտը պակասեց. նրա մի մասը ընկաւ վաճառականի գրանը, բայց դրա փոխարէն այժմ գործարանատիրոջ գրանում դրած են զուտ փողերը: Իսկ վաճառականը այս դէպքում ստացաւ 7500 ր.: Նա այդ օգուտը ի՞նչպէս ստացաւ: Մեփական աշխատանքով: Հասկանալի է որ ոչ: Նրա օգուտը գործարանատիրոջ օգուտի միայն մի մասն է, հէնց դրա համար էլ նա բանւորների չվճարուած աշխատանքի մի մասն է: Եւ վաճառականը, հետևաբար, իրեն պահում է օտարի աշխատանքով, գործարանի բանւորների աշխատանքով:

Վաճառականից յետոյ գալիս է կալուածատէրը: Մեր գործարանատէրը իւր գործարանը շինեց կալուածատիրոջ հողի վերայ: Ճիշտ է, լինում է, որ գործարանը հիմնում են իրենց սեփական հողի վերայ, բայց յաճախ է պատահում և օտարի: Հողատէրը դրա համար ցանկանում է վարձ ստանալ, այսպէս անուանուած ոէնտա (գրամական հասոյթ): Ինչ կարող ես անել, մտածում է ինքն իրեն գործարանատէրը, քանի որ հարկաւոր է վճարել, ուրեմն վճարիր: Եւ իւր օգուտի 3000 ր. տալիս է նրան իբրև ոէնտա:

Այդպէս ուրեմն, որտեղից է առաջանում հողատիրոջ օգուտը: Պարզ է, որ կրկին գործարանատիրոջ օգուտից, և, հետևաբար, կրկին գործարանի բանւորների չվճարած աշխատանքից *):

*) Մենք այստեղ խօսում ենք այնպիսի հողատիրոջ մասին, որը ինքը տնտեսութեամբ չէ պարապում: Իսկ այնպիսի հողատէր, որը պարապում է իւր սեփական տնտեսու-

Մերգործարանատիրոջ մօս մնաց միայն 34,500 ր.
օգուտ։ Բայց այժմս էլ չի կարող այդ բոլոր դրամ-
ները իւր զրպանը գնել։ Մենք արդէն ասացինք, որ
նորա տանը սարքելու համար ծախսեց 150,000 ր։

Այս 150,000 ր. կարող է իրեն սեփականը լի-
նել, կարող է և փոխ վերցրած լինել որևէ մէկից։
Չէ՞ որ շատ կան այնպիսի հարուստ մարդիկ, որոնք,
փոխանակ որևէ է գործ ձեռնարկելու, իրենց փողերը
ուրիշներին են տալիս աճեցնելու և ստացած տոկոս-
ները տարեցտարի աւելացնում են իրենց դրամագլ-
խի վերայ։ Հէնց մի այգպիսի դրամատէրից էլ կարող
էր փող փոխ ուղել մեր գործարանատէրը։ Ենթադրենք,
որ դրամատէրը տուեց նրան հարկաւոր 150,000 ր.
6 0/0-ով... Այդ գէպքում գործարանատէրը իւր օգուտ-
տից 9000 ր. տալիս է դրամատիրոջը։ Նրան մնում է
միայն 25,500 ր., իսկ դրամատէրն օտարի գրպանից
իրենն է տեղափոխում 9000 ր., Բայց ում զրպանից։
Առաջին հայեացքից կթուայ, որ գործարանատիրոջ
գրպանիցն է, բայց այս 9000 րուբլին էլ, իսկապէս,
վերցրած է բանւորների չվճարած աշխատանքից։

Սյուէս ուրեմն, գործարանատիրոջը մնում է 25,
500 ր. բայց նա այս մնացորդի հետ էլ չի կարող իւր
ուղածի նման վարուել։ Կարավարութիւնը նոյնպէս
ցանկանում է իւր բաժինը ստանալ այս գումարից։

Ամենից շատ հարկ վճարում են իրենք աղքատ-
ները, բանւորները։ Բայց գործարանատիրոջ և դրա-
մատիրոջ համար էլ է նա վճարում։ Եւ մեր գործա-
րանատէրը մի փոքր էլ կառավարութեանն է բաժին
թեամբ, նոյնպէս իրեն պահում է իւր սեփական բանւորնե-
րի աշխատանքով, այսինքն վարձկանների, վարողների հըն-
ձողների և այլն աշխատանքով։

հանում իւր օգուտից։ Նա տալիս է իրեւ հարկ, ենթադրենք, 500 ը.։ Հեշտ է հասկանալ, որ այդ հարկը վճարեցին բանւորները, որովհետև ոչ մի դործարանատէր իսկական իրենը ոչինչ չունի. այլ բաժանում է միայն յաւելեալ արժէքը, բանւորների չըվճարուած աշխատանքը։

Մեր գործարանատիրոջը մնում է կրկին 25000 ը. նրանից 750 ը. գնում գործարանի վերատեսչի ոռոճկի համար, 1500 ը. ապահովագրական ընկերութեանը և 2250 ը. ձեռնարկութեան այլ ծախքերի համար։ Մնում է 20500 ը. զուտ արդիւնք, որի հետ գործարանատէը կարող է այնպէս վարուել, որպէս ինքն է ցանկանում։ Եւ ամբողջ աշխարհը կասէ, որ այդ 20500 ը. նրա «սեփականութիւնն» է, որը նա ձեռք բերեց «սեփական աշխատանքով»։

VI

Այժմ մենք կարող ենք լրիւ պատասխան տալ գրքի սկզբում իրեւ վերնագիր դրուած հարցին։ Ո՞վ ինչով է ապրում։

Ո՞վ իւր, և ով օտարի աշխատանքով։ Ով ինչով է իրեն պահում, իւր, թէ օտարի ձեռքի աշխատանքով։ Այժմ մենք բոլոր մարդկանց կարող ենք երեք կարգի բաժանել։ Առաջին կարգին պատկանում են այն մարդիկ, որոնք բանում են իրենց համար և պահում են իրենց սեփական աշխատանքով։ Դրանց թուին են պատկանում բոլոր այն արհեստաւորները, որոնք սեփական գործիքներ ունեն արգիւնաբերութեան համար և բոլոր այն գիւղացիները, որոնք այնչափ հող

ունեն, որ կարող են իրենց գոյութիւնը պահպանել սեփական աշխատանքով:

Ուրիշ կարգ: Դոքա այն բանւորներն են, որոնք արդիւնաբերութեան համար սեփական գործիքներ չունեն, և գիւղացիները, որոնք չափազանց քիչ հող ունեն կամ բոլորովին չունեն, և որոնք պարտաւոր են իրենց ծախելու, իրենց աշխատող ոյժը ծախելու։ Այս կարգի մէջ ենք հարւում մենք բոլոր օգնականներին, գործարանի բանւորներին, գիւղացի բանւորներին, (ճարակ), վարձկաններին և այլն։

Իսկ երրորդ կարգը կազմում եննրանք, որոնք արդիւնաբերութեան դործիքներ ունեն, բայց իրենք չեն բանում, այլ ուրիշներին են հարկադրում աշխատելու։

Այս կարգին պատկանում են գործարանատէրերը, վարպետները, կալուածատէրերը և այլն։

Մենք արդէն գրքի առաջին կիսում տեսանք, թէ ինչպիսի են այդ կարգերը. մի բուռը մարդիկ ապրում են օտարի աշխատանքով։ Բայց ինչու է այդ այդպէս։ Որովհետև ժողովրդի ստուար մասը ազատ չէ, որովհետև նա պարտաւորուած է վաճառել իւր աշխատող ոյժը, վաճառել իրեն։

Բայց ինչու է պարտաւորուած նա իրեն ծախելու։ Որովհետև նա չունի աշխատելու գործիքներ։ Իսկ մենք արդէն տեսանք, որ նա, ով չունի աշխատելու գործիքներ, պարտաւոր է իրեն ծախել, հակառակ դէպքում նա քաղցից կմեռնի։ Հետևաբար, եթէ կամենում ենք ուղղել, բարելաւել, փոփոխել այժմեան կարգերը, եթէ կամենում ենք մէկի կարիքները և միւսի շքեղութիւնը հեռացնել, այն ժամանակ ի՞նչ պիտի անենք մենք։ Պարզէ է, որ այնպէս պիտի կարգադրել, որպէսզի ամեն մինը ու-

նենար իւր աշխատելու սեփական գործիքները։ Այն ժամանակ ամեն մէկը կաշխատի իրեն համար։ Ոչ ոք ուրիշի համար չի աշխատել, ոչ ոք իրեն աշխատանքից յաւելեալ արժէք չի տալ։ Այն ժամանակ ոչ ոք չի դնել մարդոց, նրանց աշխատող ոյժը, ոչ ոք չի խլել յաւելեալ արժէքը, ոչ ոք չի կարողուրիշի աշխատանքով, ինչարատանալ, ոչ ոք չի պահել իրենց օտարի աշխատանքով։

—Յարմարեցնել այնպէս, որ ամեն մէկը ունենայ իւր աշխատելու գործիքները։ Բայց ինչպէս յարմարեցնել այդ։ Ահա հէնց դրա մէջն է ամբողջ խընդիրը, —կնկատէք դուք ինձ։

Ինչպէս յարմարեցնել։ Աշխատելու գործիքները վերցնել նրանցից, որոնց մօտ չափազանց շատ կայ, և տալ աշխատաւոր մարդկանց նրանցից օգտուելու համար։

—Ոյժով վերցնել։ Ներեցէք, ախար ինչպէս վերցնել։ Միթէ այդ կարելի է։ Միթէ այդ խելացի բան է։ Միթէ այդ բարոյական բան է։

Արդեօք կարելի՞ է այդ, արդեօք խելացի է, արդեօք բարոյական է — ահա երեք հարց, որոնց կաշխատենք պատասխան տալ։

I

Սկզբից նայեք, թէ արդեօք կարելի է։ արդեօք կարելի՞ է, որպէսզի ամեն մի ըանւոր, ամեն մի մարդ ունենայ իւր աշխատելու գործիքները։

Դա այնչափ էլ հասարակ հարց չէ, որչափ կարող է երևալ։ Առաջին հայացքից թւում է, որ այդ բոլորովին դժուար բան չէ։ Զէ որ եղել է ժամանակ,

որ համարեա ամեն մի բանւոր ունեցել է իւր սեփական արհեստանոցը, որտեղ նա ինքն է եղել տէր:

Հին ժամանակները—հէնց այդպէս էր: Բայց այն ժամանակ աշխարհիս վերայ անհամեմատ քիչ մարդիկ կային: Այն քաղաքում, որտեղ 200 տարի սորանից առաջ կար 500 հազար բնակիչ, այժմ 4 միլիոն է (Լօնգոնը Անգլիայում), այն երկիրը, որտեղ 200—300 տարի սրանից առաջ 2 միլ. ժողովուրդ կար, այժմ գուցէ—10 միլիոն է և աւելի: Առաջ որտեղ բաւական էր 1000 զոյգ կօշիկ, այժմ հարկաւոր է մէկ միլիոն. այնտեղ, որտեղ առաջ գործ էր ածւում մէկ միլիոն արշին կտաւ, այժմ պահանջւում է 10, 20 անգամ շատ: Հետեաբար, հին ժամանակները, «օրհնուած հին ժամանակները» այնքան էլ լաւը չէ, որպէսզի նրա վերադարձը ցանկանք. ջուլհակը, աշխատելով կնոջ և երեխաների հետ իւր արհեստանոցում կամ փականագործը, որը փականներն իրեն տանն էր պատրաստում, չէին կարողանում շատ պատրաստել ոչ կտաւ, ոչ փականներ: Քիչ էին աշխատում, որովհետեւ պահանջն էլ մեծ չէր. ջուլհակը գործում էր իւր կտաւը վատ դազգահի վերայ, փականագործը իրեն փականները պատրաստում էր վատ գործիքների օգնութեամբ:

Այժմ ջուլհակը պիտի անպայման մեքենալի օգնութեամբ գործէ: Եթէ որ նա ցանկանար կտաւը դազգահի վերայ գործել, այդ միևնոյնը կլինէր, եթէ որ մէկը ցանկանար ձիով գնալ այնտեղ, որտեղ շինուած է երկաթուղի: Նա, գուցէ, պարտաւորուէր 100 ժամ վատնել այն բանի վերայ, որը մեքենաների օգնութեամբ կգործէր մէկ ժամում:

Ներկայումս պատրաստի մթերքի շատ մեծ պա-

հանջ կայ։ Անհրաժեշտ են մեծ գործարաններ, շոգեմեքենաներ, մեծ պահեստատներ, որպէսզի անհրաժեշտ բանակութեամբ մթերքներ արտադրեն։ Ներկայումս, օրինակ, միմիայն Անգլիայում բամբակ գործող բանտորների թիւը հասնում է 450,087 հոգու, — որոնք աշխատում են 33 միլ. իլիկի վերայ։ Եւ եթէ ամեն մի բանտոր ունենար իւր արհեստանոցը, իւր իլիկը, այսինքն, եթէ որ ամեն մինը ինքնուրոյն բանտոր լինէր, այն ժամանակ բոլորը միասին նրա քսաներորդ մասն էլ չէին շինիլ, ինչ որ այժմու են պատրաստում։ Ամեն տեղ բամբակէ գործուածքների պակասութիւն կզգացուէր, և նոյնիսկ մեր գեղջկուհիները կսկսէին բողոքել այդպիսի կարգերի գէմ։ Դուք այժմ տեսնում էք, որ այնպէս էլ հեշտ բան չէ և միշտ էլ չի կարելի, որ ամեն մինը ունենայ իւր արհեստանոցը, իւր աշխատելու սեփական գործիքները։ Ճիշտ է, չէր լինիլ բանտորների ճնշում, բայց զրա փոխարէն կլինէր ամենանհրաժեշտ ապրանքների կարիք և նոյնիսկ սով։

Այո, սով—ինչպէս գուք ինքններդ էլ կհամոզւէք այժ։ Ներկայումս, օրինակ, համարեա թէ չկան այնպիսի բանտորներ, որոնք ունենային իրենց սեփական աշխատելու գործիքները։ Իսկ այնպիսի գիւղացիներ, որոնք մշակէին իրենց սեփական հողը՝ ամենևին չըկան։ Այնտեղ կան միայն շատ մեծ կալուածքներ, որոնք ունեն ահազին կալուածքներ, շոգեգութաններ, հնձելու և կասելու շոգեմեքենաներ, և որոնք վարձում են. գիւղական բանտորներին իրենց հողերը մըշակելու համար։

Իսկ գիւղական բանտորները ոչինչ չունեն. ոչ դաշտեր, ոչ աշխատելու գործիքներ, և ոչ էլնոյնիսկ սեփական խրճիթ. հետեապէս նրանք պիտի վաճառ-

ուին աղաներին ստրկանալու համար և իրենց աշխատող ոյժը նրանց տան:

Այդպիսի բանւորները վատ են ապրում, շատ վատ: Աներևակայելի սարսափ է առաջացնում անգրամական հողատէրերի ազահութիւնը, երբոր գրքերում կարդում ես անգլիական գիւղացի բանւորի թշուառ դրութեան նկարագրութիւնը:

Բայց ի՞նչ էք կարծում գուք, եթէ նրանցից ամեն մէկին տրնուած լինէր մի որոշ կտոր հող, դրանց օգուտ կունենար ամբողջ անգլիական ժողովուրդը: Բոլորովին ոչ: 1875 թ. Անգլիան իւր ապրուտի համար 22 միլ. կվարտէր *) հացի կարիք զգաց (1 կվարտէրը հաւասար է 75 դարնցի): Անգլիայի հողի վերայ բռնում է միայն 13 միլ. կվարտէր հաց, այնպէս որ 9 միլ. հարկաւոր է արտասահմանից բերել: Եթէ որ հողը բաժանուած լինէր մանր բաժինների, որոնց վերայ չէր կարելի գործադրել ոչ շոգեգութաններ, ոչ սերմանիչներ, ոչ թեղը քամելու մեքենաներ, այն ժամանակ ոչ թէ չէր հաւաքուիլ 13 միլ. կվարտէր, այլ, գուցէ և հինգը-վեցը: Այն ժամանակ Անգլիայում կակսուէր սով:

Դուք տեսնում էք, կնշանակէ, որ ներկայումս չի կարելի, որ ամեն մէկն ունենայ իւր աշխատանքի սեփական գործիքները:

Բայց ի՞նչպէս անել: Զունենալ իրենց սեփական գործիքները՝ վատ է, որովհետեւ ստիպուած կլինեն ծախել իրենց, հարստացնել ուրիշներին. ունենալ նը-

*) 1^{1/3} Չետվերտ.

**) Դեռևս միմիանցից չը զրկած դարմանն ու հացահատիկը:

բանց՝ նոյնպէս վատ է, որովհետև այն ժամանակ կարիք, սով կլինի։ Ի՞նչ անել։ Մւր գտնել նրա եթը։

Եթ կայ և այն էլ շատ լաւ։ Ինչու ապագայում էլ այնպէս չյարմարեցնել, ինչպէս է և այժմ. որտեղ բանւորները աշխատում են մեծ գործարաններում, և մեծ հողաբաժիններում միասին, թող և ապագայում միասին, ընդհանուր համաձայնութեամբ աշխատեն։ Բայց նրանք թող չբաժանեն ոչ գործիքները, ոչ հողը. թող ամբողջ գործարանը պատկանի բանւորներին. ոչ թէ նրանցից որևէ մեկին, այլ ընդհանուրին։ Թող գործարանները և ամբողջ հողը պատկանի բոլոր բանւորներին, բոլոր գիւղացիներին, թող այն լինի երանց ընդհանուր սեփականութիւնը։ Թող նրանք միասին աշխատեն, բայց ոչ թէ գործարանատիրոջ, այլ իրենց համար։ Այն ժամանակ նրանք կանեն ոչ պակաս, քան այժմ, այլ խիստ շատ։ Ամեն մէկը կգիտենայ, որ գործարանատիրոջ համար չէ աշխատում, այլ իրեն բոլոր ընկերների համար, որոնք նոյնպէս աշխատում են իրեն համար։ Այն ժամանակ բանւորը կհասկանայ, որ նա թէկուզ երկար էլ բանի, քան թէ հարկաւոր է գործարանում, այն ժամանակ յաւելեալ աշխատանքը, յաւելեալ արժէքը բոլորին կծառայէ, չի հարստացնիլ մի բուռը մարդոց, այլ կբարւոքի բոլորի և ամեն մէկի վիճակը։

Այսպէս ուրեմն, բանւորներին կարող է օգնել միմիայն հողի և գործարանների հասարակական սեփականութիւն գարձնելը։

*) Այսինքն արքունական։

. II

Այժմ հարցնում ենք մեզ, արդեօք կյաջողուկի այգ։ Արդեօք կարելի՞ է յուսալ, որ այս հողի և աշխատելու գործիքների ընդհանուր սեփականացնումը կիրականանայ գործով։ Արդեօք կարելի՞ է, որ ամեն մէկը իւր գլխի տէրը լինի։ Միշտ եղել են աղքատներ, միշտ և ամեն տեղ եղել են մեծ բանակութեամբ ճնշուածներ և մի բուռը ճնշողներ։ Միշտ էլ եղել են մարդիկ, որոնք այդ կարգերը գտել են անիրաւացի, բայց և այնպէս ոչինչը չօգնեց. միշտ էլ աղքատի գրութիւնը եղել է վատ, իսկ հարուստներինը՝ լաւ։

Իսկ այժմ, միթէ աղքատների թիւր աստիճանաբար չի աւելանում, միթէ բոլոր երկրների բանւորներին չի ընդգրկում սոսկալի կարիքը։

Այդ բոլորը ճշմարտութիւն է, զուտ ճշմարտութիւն։ Բայց և այնպէս չի կարող դա մեր յոյաը կտրել. ընդհակառակն, մենք հէնց դրանից էլ կարող ենք տեսնել, որ յամենայն դէպս կհասնի ցանկալի պագան։ Ահա թէ գործը ինչումն է։

Աղքատների թիւր, որոնք ոչ մի սեփականութիւն չունեն, միշտ աւելանում է և կաւելանայ։ Ներկայ կարգերում դրա դէմ ոչինչ չէ կարող անել։ Արհեստաւորը, իւր ապրանքը շուկայ ուղարկելով, ցանկանում է նրա համար որչափ կարելի է շատ ստանալ, և դրանում զարմանալու ոչինչ չկայ. նա նրա վերայ որչափ կարողացել է աշխատել է։ Բայց իրեն ինչ օգուտ իւր աշխատանքից։ Գործարանատէրը, նոյն ապրանքը գործարանում պատրաստելով, աւելի քիչ աշխատանք է գործադրում նրա աշխատելու համար։ Եթէ մենք

Ենթադրենք, որ փականագործը փականի վերայ 3 ժամ է չարշարւում, այն ժամանակ նոյն փականը գործարանում կշինեն 1 ժամում, իսկ երբեմն էլ աւելի շուտ։ Փականագործը իւր փականի համար կցանկանայ վերցնել 30 կոպ. (Եթէ մէկ ժամուայ աշխատանքը արժէ 10 կոպ.), գործարանատէրը կվաճառէ 10 կոպէկով։ Հասկանալի է, որ ոչ ոք չի գնիլ փականագործից, և փականագործը, չկարողանալով իւր ապրանքը սաղացնել, կվաճառէ իւր դազգահը և կգայ իւր աշխատող ոյժը կվաճառէ գործարանատիրոջ վերայ։

Ինչ որ ասուած է փականագործի մասին, նոյնը յարմարւում է նաև միւս արհեստաւորներին. Նրան մեքենաների և գործարանների հետ չեն կարող մըրցել և վազ թէ ուշ պիտի վարձու բանւորներ գառնան։ Ահա այգալիսով աստիճանաբար աւելի մեծ քանակութեամբ մարդիկ են զրկւում իրենց ազատութիւնից և ստիպուած վաճառում են իրենց աշխատող ոյժը։ Եթէ բանւորները դոնէ ունենային իրենց անփոփոխ վարձը, որի վերայ կարողանային իրենց յոյսը դնել, այն ժամանակ, գուցէ, որևէ կերպ կարողանային ապրել երկրիս երեսին։ Բայց գրանից շատ հեռու ենք։ Բանւորական վարձագրութիւնը, ընդհակառակն, աստիճանաբար պակասում է, այն ինչ դորձարանատիրոջ օգուտը անընդհատ շատանում է։

Աւելի հասկանալի կերպով կաշխատենք բացատրել այդ։ Յիշենք, թէ որտեղից է ստացւում գործարանատիրոջ օգուտը, բանւորը տալիս է նրան իւրյաւելեալ աշխատանքը, որովհետև օրուայ միայն մի մասն է աշխատում իւր համար, իսկ մնացած մասը աշխատում է գործարանատիրոջ համար։ Եթէ, օրինակ, գործարանատէրը պահում է 20 բանւոր, վճա-

ըելով նրանց օրական 90-ական կոպէկ, այդ նրա հտամար է այդչափ վճարում, որ նրանց գոյութիւնը պահպանելու համար հէնց այդչափ է հարկաւոր (կերակրի, զգեստի, բնակարանի համար): Բանւորնեները վեցժամեայ աշխատանքից յետոյ արդէն յետ են տալիս այդ 90 կոպէկը, իսկ օրուայ ֆնացած մասը ձրի են աշխատում, և այդպիսով գործարանատիրոջը ձրիապէս տալիս 90 կ. նոր արժէք (եթէ ենթադրենք, որ բանւորը ընգամենը օրական աշխատում է 12 ժամ): Եւ եթէ նրանք 20 մարդ են և աշխատում են, ենթադրենք, տարեկան 333 օր, այն ժամանակ նոքա տիրոջը տարեկան օգուտը կբերեն 6000 ր. ($20 \times 90 \times 333$): Պարզ է, որ որչափ բանւորներն իրենց աշխատանքից շատ են տալիս, այնչափ շատ կլինի և գործարանատիրոջ օգուտը. այնպէս որ եթէ ամեն օր փոխանակ 6 ժամի, բանւորները տային նրան 8 ժամ, աղայի օգուտը կըլինէր ոչ թէ 6000 ր., այլ 4200 բուբլի:

Հէնց այդպէս է և ներկայումս—բանւորները ստիպուած են իրենց բանւորական օրուայ մի մասը, որը գնալով աստիճանաբար աճում է, գործարանատիրոջը տալու:

Ի՞նչպէս: Շատ հասկանալի է թէ ինչպէս: Ի՞նչո՞ւ է մեր օրինակ վերցրած բանւորը օրական 90 կոպ. ստանում: Որովհետև իւր կեանքը պահպանելու համար նրան այդչափ է անհրաժեշտ (կերակրի, հագուստի բնակարանի համար). այդ գնով 6 ժամ աշխատելով, բանւորը օրուայ միւս մասը (այսինքն 6 ժամը) աշխատում է ձրի:

Եթէ որ այնպէս պատահէր, որ կերակրուելու և առհասարակ բանւորի ապրուստի համար փոխանակ 6

Ժամուայ աշխատանքի բաւական լինէր 4 ժամուառանը՝ այն ժամանակ աշխատած վճարը կլինէր արդէն ոչ թէ 90 կոպ., այլ միայն 60 կոպէկ։ Բանուրը իրեն համար կաշխատէր միայն 4 ժամ, իսկ գործարանատիրոջ օգտին կաշխատէր 8 ժամ, տալով նըրան ամբողջ յաւելեալ աշխատանքը, ամբողջ յաւելեալ արժէքը։

Այդպէս է պատահում և իրականութեան մէջ։ Բայց որ չափով որ գործադրութեան մէջ են մտնում մեքենաները, որոնցով ամեն առարկայ կարելի է շուտ արտադրել, այնչափ աստիճանաբար աւելի քիչ աշխատանք է պահանջւում այն առարկաները պատրաստելու համար, որոնց կարիք է զգում բանուրը։ Առաջ շապիկն արժէր 2—3 օրուայ աշխատանք, այժմ միայն մէկ օրուայ, իսկ երբեմն էլ քիչ. առաջ մի որևէ է բաձկոն արժէր, օրինակ, 10 օրուայ աշխատանք, այժմ երեք էլ չարժէ։

Հետեապէս, բանուրը ներկայումս իրեն համար այնչափ երկար չի աշխատում (որպէսզի իրեն վարձը վերցնէ), որպէս առաջին ժամանակները։ Առաջ նա իրեն համար պարտաւոր էր 6 ժամ աշխատել այն դէպում, երբ այժմ բաւական է 4 ժամ։ Բայց նա դրանից ոչ մի օգուտ չունի։

Առաջ ամենօրեայ 12 ժամուայ աշխատանքից նա իրեն համար աշխատում էր միայն 6 ժամ, իսկ մընացած 6 ժամ տալիս էր գործարանատիրոջը. այժմ նըրան բաւական է 4 ժամ, հետեապէս, գործարանատիրոջը մնում է 8 ժամ։ Առաջուայ նման չարչարում է բանուրը, օգտուում է միայն գործարանատէրը։ Առաջներումը բանուրը իրեն համար աշխատում էր 6 ժամ, իսկ մնացեալ 6-ը գործադրում էր յաւելեալ ար-

ԺԵՔ ստեղծելու համար. այդ յաւելեալ արժեքի չափը (այսինքն չվճարուած և վճարուած աշխատանքի միջի յարաբերութիւնը) հաւասարւում 1 կամ 100% . այժմ բանւորի համար անհրաժեշտ աշխատանքը տեսում է 4 ժամ, իսկ յաւելեալ արժեքինը 8 ժամ, ուստի նրա չափը կլինի 2 կամ 200% : Այժմ ամեն տեղ, արդիւնաբերութեան ամեն ճիւղում ներմուծում են մեքենաներ։ Գործը նրանց միջոցով աւելի յաջող է գնում։ Դորա համար և ժամանակը, որը անհրաժեշտ է բանւորին իւր գոյութիւնը պահպանելու համար, միշտ պակսում է, իսկ այն ժամանակը, որ ընկնում է գործարանատիրոջ բաժինը, միշտ շատանում է։ Յաւելեալ արժեքի չափն էլ միշտ աճում է։

Այժմ մենք տեսնում ենք, թէ ինչու բանւորները պիտի աղքատանան, իսկ գործարանատէրերը—հարստանան։

Բայց, դրանում քիչ բան կայ մխիթարական, կամէք դուք ինձ եթէ այդպէս է, ուրեմն, հապա ինչպէս յոյս ունենանք մենք մեր գրութիւնը բարւոքելու։

«Զկայ չարիք առանց բարիքի» ասում է առածը։ Այդպէս և յաւելեալ արժեքի չափի մշտական բարձրանալում կայ և շատ լաւ բան։ Ամենից առաջ, լաւ է այն, որ բանւորը կարող է իրեն պահել աւելի և աւելի քիչ աշխատանք ծախսելով։ Այժմ, երբ համարեայ ամբողջ աշխատանքը դրւում է աղային, բանւորը դրանից իչ է շահւում, բայց ժամանակով այդ անհրաժեշտ աշխատանքի քչանալը նրա համար շատ կարևոր կլինի։

Բացի դրանից, ես այստեղ պիտի յիշեցնեմ կրկին մէկ հանգամանք, որի մասին մինչև այժմ ոչինչ չեմ ասել։ Ինչպէս էք կարծում, արդեօք բոլոր գործարա-

նատէրերը օտարի աշխատանքով են հարստանում:

Ի հարկէ ոչ բոլորը, բոլորը հարստանալ չեն կարող. նրանցից ամեն մէկը ցանկանում է միւսին ոչնչացնել: Մէկը աշխատում է, որչափ կարելի է շատ ապրանք պատրաստել վաճառելու համար, օրինակ չիթ, ուրիշը այդ ապրանքից ուղարկում է աւելի շատ, երրորդը այդ երկուսից որչափ կարելի է աժան վաճառէ, եթէ չէ ուզում, որ իւր ապրանքը դարսած մնայ: Վերջապէս այնչափ շատ չիթ են տանում շուկայ, որ նրան այլևս գնող չկայ, իսկ գործարանատէրը առանց գնողների այնքան էլ հեռու չէ սնանկանալուց:

Միայն շատ հարուստները կարող են երկար ժամանակ սպասել մինչև կպահանջեն, և շարունակել արգիւնաբերութիւնը, իսկ աւելի քիչ հարուստները իսպառ ոչնչանում են և ոչնչացնում են հազարաւոր բանւորներ, որոնք նրանց մօտ էին աշխատում, թողնելով նրանց առանց մի կտոր հացի: Եւ այդ կրկնուում է ամեն 8—10 տարէնը մի անգամ: Ամեն մի 8—10 տարուայ ընթացքում սնանկանում են մեծ քանակութեամբ մանր գործարանատէրեր, փողոց է շղրտւում բազմաթիւ բանւորներ, միայն մեծ գործարանատէրերն են հարստանում:

Սրանց ինչ է հետեւում ուրեմն:

Շատ բան: Գործարանատէրերի և առհասարակ հարուստների թիւը պակասում է, իսկ չքաւոր բանւորներինը՝ աստիճանաբար աճում: Հարստութիւնը աստիճանաբար աւելի քիչ մարդու մօտ է հաւաքւում, — իսկ կարիքը ընդգրկում է բնակչութեան աւելի և աւելի ստուար մասը:

Բանւորները տեսնում են, որ գործարանատէրերը աւելի և աւելի են պակասում, որ թեպէտ և նրանց

հարստութիւնը աճում է, բայց նրանց թիւը աստիւ-
ճանաբար պակասում է, այնպէս որ այն, ինչոր
գործարանատէրերը շահում են հարստութեան վերա-
բերմամբ, նոյնը կորցնում են ոյժի վերաբերմամբ:
Իսկ բանւորները գործարաններում ընտելանում են
միաբան աշխատելուն, իրենց սեփական աչքով տես-
նում են, թէ որպէս ձեռնառու է միասին աշխատելը,
թէ ինչպէս այդ գէպքում և ժամանակ է շահում և
գործուածքները աւելի լաւանում են: Նոքա իրենց
սեփական աչքով տեսնում են, թէ որչափ վատ է,
երբ աշխատանքի բոլոր գործիչները պատկանում են
մի սեփականատիրոջ, որը ոչ միայն ինքը չէ բանում,
այլ և յաճախ գաղափար չի ունենում այն մասին, թէ
որպէս են պատրաստում՝ նրա մօտ եղած նիւթերը:

Այս գէպքում բանւորները գործարաններում ըն-
տելանում են միմիանց պաշտպանելով, նրանք տես-
նում են, որ բանւորը բանւորի եղբայրն է, որ նրանք ու-
նեն մի ընդհանուր թշնամի, որն ապրում է իրենց
աշխատանքով, և հասկանում են նրանք, որ նրանց
յաղթելու համար անհրաժեշտ է միանալ, օգնել մի-
մեանց:

Ի հարկէ, բանւորների շատերի մէջ է յղացել
այն միտքը, թէ մէնք իսկապէս, ինչից դրդուած ենք
մէկի համար աշխատում: Մենք այսչափ շատ ենք,
իսկ նա—մէկը. մենք աշխատում ենք մեզ համար,
իսկ նա խլում է մեր աշխատանքը: Եթէ գործարան-
ները մերը լինէին, այն ժամանակ ամեն ինչ ուրիշ
կերպ կերթար. մենք օգուտի յետեկից չէինք վազիր,
այլ կմտածէինք միմիայն մեր գսյութիւնը պահպանե-
լու մասին: Մենք կաշխատէինք բոլորի օգուտի հա-
մար. նա միայո իրեն համար է աշխատում, ի վնաս-

բոլորիս: Ինչու համաձայնութեան չգալ բոլոր բանտորների հետ. ինչու բոլոր աղաներից չիւել հողը և գործարանները:

Բայց արդեօք իրաւացի՞ կլինի այդ:

Ոչ թէ քիթն է քթախոտի տուփի համար, այլ քթախոտի տուփը—քթի համար: Մարդիկ աշխարհումս նրա համար չեն ապրում, որպէսզի որչափ կարելի է շատ նիւթեր արտագրեն, այլ նիւթերը նրա համար են արտադրում, որպէսզի մարդկանցկարիքներին գոհացում տրուի: Նիւթերն արտագրում են բանւորները, նրանք էլ պիտի օգտուին նրանցից. իսկ դրա համար անհրաժեշտ են նրանց աշխատելու գործիքներ:

III

Այժմ մնում է մի ամենակարևոր հարց. ի՞նչպիսի միջոցով խլել գործարանները և հողերը, այդ բանին ի՞նչպէս հասնել:

Այդ արդէն ձեր գործն է: Դրա մասին դուք ինքնքերդ պիտի խորհէք: Հին ժամանակները, երբոր խօսք էր բացւում այն մասին, թէ որպէս ազատել երկիրը ստրկութիւնից, երբոր հարկաւորուում էր թշնամուն դուքս քշել, այն ժամանակ ձեզ էին դառնում, բանւորներ, և այն ժամանակ դուք կարող էիք հարցնել. «Մենք պատրաստ ենք հայրենիքն ազատել, թշնամուն հալածել, բայց ի՞նչպէս անել այդ»:

Այժմս էլ խօսքը միայն ձեր մասին է, ձեր ընտանիքների մասին, ձեր եղբայրների մասին, իսկ ձեր սեփական գործը, դուք ինքներդ պիտի կարողանաք անել:

«Ց Ա Խ Ե Լ Ո Ւ Ա Ծ»

Ամեն մի արդիւնքի արժէք որոշում է նրա արտադրութեան (այսինքն նրա պատրաստելու) վերայ ծախսուած աշխատանքի քանակով։ Այդ ընդունուած է բոլոր դիտնականներից։ Բայց դիտութիւնից անտեղեակ մարդու գլխում կարող է այսպիսի միտք յղանալ,—եթէ ամեն մի արդիւնքի արժէքը կլինի այնչափ շատ, որչափ աւելի աշխատանք է գործադրուած նրա արտագրութեան համար, այն ժամանակ անշընորհք և ոչ ճարպիկ կօշկակարը իւր կօշիկների վերայ աւելի շատ տանջուող, քան հարկաւոր է, կըստանայ նրանց համար աւելի շատ, քան փորձուած վարպետը, որը աւելի լաւ է բանում և աւելի արագ։ Բայց միսալ է այդպիսի դատողութիւնը։

Գիտութիւնը այն յաւելեալ ժամանակի և աշխատանքի վատնելու մասին չէ խօսում, որը առաջէ դալիս բանորի անշնորհքութիւնից։ Այդ յաւելեալ աշխատանքն անպէտք աշխատանք է, նրանց կողմից ի զուր տեղը վատնած, միայն անշնորհքութեան պատճառաւ։ Գիտութիւնը խօսում է անհրաժեշտ աշխատանքին, առանց որի չի կարելի կառավարուել։ Իսկ այդ անհրաժեշտ աշխատանքիցնոյնպէս միշտ միատեսակ չի լինում։ Բոլորին յայտնի է, որ կարի մեքենայով աւելի շատ կարելի է կարել, քան առանց մեքենայի։ Թանի դեռ կարէ մեքենաներ չկային, կարելու վերայ գնացած անհրաժեշտ աշխատանքը, ասենք թէ,

շապկի, միջակ (այսինքն ոչ ամենալաւ, ոչ ամենավատ) կարանող կնոջ աշխատանք էր, ասեղի օգնութեամբ բանող: Երբ որ հնարեցին կարէ մեքենաները, շապիկ կարելու վերայ գնացած անհրաժեշտ աշխատանքը քչացաւ, որովհետև մեքենայի վերայ կարելի է աւելի շուտ կարել այդ: Դերձակուհին, որը մեքենայ չունի, շապկի վերայ առաջուայ նման շատ կշարչարուի բայց այժմ նրա աշխատանքի մի մասը անհրաժեշտ չի հաշւում արդէն: Իսկապէս ո՞ր մասը: Ահա թէ որը: Եթէ մեքենայով Յ անգամ աւելի շուտ կարելի է կարել, քան առանց մեքենայ, այն ժամանակ մեր գերձակուհու աշխատանքի միայն երրորդ մասը կլինի անհրաժեշտ աշխատանք: Ենթադրենք, որ նա շապկի վերայ չարչարուել է Յ ժամ, իսկ մեքենայի վերայ կարելի էր նրան կարել երկու ժամուայ ընթացքում: Այն ժամանակ մեր գերձակուհու Յ ժամուայ աշխատանքը կհաւասարուի միայն երկու ժամուայ անհրաժեշտ աշխատանքին: Ահա թէ ինչու է մեքենաների ներմուծումը քայլայում արհեստաւորներին, որոնք աշխատում են ձեռքի գործիքներով:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Որպէսզի իմ աշխատանքը լինի անհրաժեշտ աշխատանք, պէտք է որ իմ արտադրած մթերքը հարկաւորուի հասարակութեանը, որպէսզի նրանց պահանջ լինի, ինչպէս ասում են գիտնականները: Վերցնենք թէկուզ հէնց ջուլհակի գործը: Կտաւը և բոլոր գործիքները, ի հարկէ, հարկաւոր են մարդոց, այդ այնպիսի մթերք է, առանց որի կարող են կառավարուել միայն վայրենիները: Դորա համար էլ կտաւի պահանջ կայ, ջուլհակի աշխատանքը անհրաժեշտ աշխատանք է: Բայց այստեղ էլ գործը կախուած է այն բանից, թէ ջուլհակն ար-

գեօք մեքենայի վերայ է աշխատում, թէ ձեռքի վերայ. Ներկայումս ջուլհակի անհրաժեշտ աշխատանք կոչւում է այն աշխատանքը, որը անհրաժեշտ է մեքենաների վերայ գործելու ժամանակ։ Այն աւելորդ աշխատանքը, որը կհարկաւորուի ձեռքի դազգահի համար, չի հաշւում արդէն անհրաժեշտ։ Այդ պատճառով էլ մեր ջուլհակ—տնայնադորձները ներկայումս այդպէս կարօտութեան մէջ են։

Բայց ենթադրենք, որ 10,000 կտոր կտաւ էր հարկաւոր, իսկ պատրաստել էին նրանցից 20,000։ Դուրս է գալիս, որ երկու անգամ շատ կտաւ էին պատրաստել, քան պահանջւում էր. կնշանակի և երկու անգամ աւելի աշխատանք էին դորժադրել նրա արտադրութեան համար, քան հարկաւոր էր։ Աւելորդ աշխատանքը անհրաժեշտ աշխատանք չէ։ Եթէ գործած բոլոր կտորների կէսը աւելորդ տեղը պատրաստած լինէին, այն ժամանակ և աշխատանքը, այդ կիսի արտադրութեան համար գործ դրած, կլինի աւելորդ աշխատանք, և ոչ թէ անհրաժեշտ։ Եթէ այն մարդիկ, որոնք կտաւ են պատրաստում (իրենք ջունակները կամ նրանց տէրերը) սկսեն բոլորը միանգամից վաճառել, այն ժամանակ կտաւի արժէքը երկու անգամ պակաս կլինի, քան թէ իսկապէս պիտի լինէր։ Նրանցից ամեն մէկը կտեսնի, որ իրեն ժամանակի կէսը ի զուր տեղը վատնեց, որ նրա աշխատանքը միայն կիսով չափ էր անհրաժեշտ աշխատանքը։ Եթէ որ կտաւ պատրաստող մարդկանց կէսը խորամանկութիւն անեն իրենց ապրանքը շուտ տանելու շուկայ, քան թէ կբերէ մրենց միւս կէսը, այն ժամանակ նրանց գուցէ, յաջողուի վաճառել հէնց աշխատանքի քանակի համաձայն, որը

գործադրուել է նրանց արտադրութեան համար։ Բայց այն ժամանակ կտաւ «արտադրողների» միւս կէսը գնողներ բոլորովին չեն գտնիլ, նրանց աշխատանքը բոլորովին աւելորդ կհամարուի. կնշանակէ, և նրանց կտաւի արժէքը հաւասար կլինի զերօյի, որովհետեւ այս կտաւի արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանք բոլորովին չի գործադրուած։ Բայց նրանց մասամբ կարող է փրկել իրենց ապրանքների աժանութիւնը։ Եւ ահա թէ ինչպէս։

Տեսնելով։ որ իրենց կտաւի պահանջ չկայ, նրանք կսկսեն, այսպէս ասած, զօռով փաթաթել գնողների վզովը. կսկսեն աւելի և աւելի պակասեցնել նրա գինը։ Այն ժամանակ շատերը այն մարդկանցից, որոնք աղքատութեան պատճառաւ չէին կարողացել կտաւ առնել, երբոր այն ծախւում էր իրեն իսկական գնով,—այժմ զշինեն նրան չնշին գնով։ Բացի դրանից, ուներներից շատերը կցանկանան պահեստի համար գնել այդ, կրկին այն պատճառաւ, որ աժանութիւնից գրաւեցին։ Շնորհիւ այդ բանի, մեր ուշացած կտաւավաճառները վերադարձրին իրենց «արտադրութեան ծախսերի» մի որոշ մասը, ոչ առանց վնասի, և առանց մեծ վնասի. յամենայն դէպս գործը գլուխ չի դալ։

Բայց ով ունի վնասուելու համար աշխատելու ցանկութիւն։ Տեսնելով որ կտաւի պահանջը պակասեց, նրա արտադրութեամբ պարապող մարդիկ կսկսեն քիչ պատրաստել այն։ Այն ժամանակ դրա գինը կրարձրանայ։ Եթէ այս անզամ կտաւը պատրաստեն ճիշտ այնչափ, որչափ նրանից պահանջւում է, այն ժամանակ նրա արտադրութեան համար գործադրուած ամբողջ աշխատանքը կլինի անհրաժեշտ աշ-

խատանք: Իսկ եթէ աւելի քիչ կտաւ պատրաստուի, քան պահանջւում է, այն ժամանակ նրա գինը աւելի կբարձրանայ, այնպէս որ արտադրողները կտանան աւելի, քան հարկաւոր է: Այն ժամանակ փոխանակ վնասի կտանան ահազին օգուտ: Բայց մեծ օգուտների ձգտողները շատ են: Կյայտնուեն կտաւի ուրիշ արտադրողներ. նրանք նոյնպէս կբերեն իրենցը շուկայ: Այն ժամանակ նրանց գինը նորից կընկնի և այն:

Կտաւի գնի այս տատանումներն են ահա մեզ հասցնում այն եզրակացութեան, որ եթէ մենք վերցնենք ոչ թէ 1 տարի և մի դէպք կտաւը շուկայում վաճառելու, այլ շատ տարիներ և շատ դէպքեր, այն ժամանակ կտեսնենք, որ նրա արժէքը որոշում է նրա արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքի քանակով:

Նոյնը կարելի է ասել և ամեն տեսակ արդիւնքի վերաբերմամբ:

Հարկաւոր է միայն յիշել, որ աշխատանքի քանակ ասելով, որը անհրաժեշտ է որևէ է արդիւնք արտադրելիս, չի կարելի հասկանալ միմիայն մի որևէ է արհեստի բանուորի աշխատանք: Այսպէս, օրինակ, փականը իրեն մէջ պարունակում է ոչ թէ միայն փականագործի աշխատանքը, այլև հանքահանի, որը հանում է երկաթահանքը, հանքը հալող, երկաթէ ձողեր պատրաստող, բերող բանուորների ևայն: Այս բոլոր բանուորները նպաստել են եթէ ոչ իրեն փականի, գոնէ նրա համար նիւթի պատրաստելուն: Հէնց դրա համար էլ այս բոլոր բանուորների աշխատանքը պիտի հաշուի առնել փականի արժէքը որոշելիս:

Հենց այդպէս էլ, երբոր մենք համեմատում էինք դերձակուհու աշխատանքը, կարի մեքենայի վերայ

